Cashback-ի տրամադրման պայմաններ և դրույթներ

1. Հիմնական հասկացություններ

Ակցիա - «Էվոկաբանկ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող միջոցառում,
Բանկ - «Էվոկաբանկ» ԲԲԸ,
Քարտապան - «Էվոկաբանկ» ԲԲԸ-ում «Mastercard» վճարային քարտի թողարկման և սպասարկման համար պայմանագիր կնքած ֆիզիկական անձ,
Վճարային համակարգ - Mastercard Inc,
Քարտ - Բանկի կողմից թողարկված «Mastercard» վճարային համակարգի քարտ, որը տրամադրվում է Քարտապանին,
Cashback կամ Քեշբեք - Գումարի որոշակի տոկոսի վերադարձ գնում կատարելուց հետո:
Չեք - Քարտի սպասարկման վճարի նվազեցում՝ սահմանված սկզբնական սպասարկման վճարի հետ,
Վաճառքի կետ – Retrofest-ի տարածքում գործող խմիչքների բարեր,
Կանոններ - Ակցիային մասնակցելու պայմաններն ու դրույթները,
Chargeback - Վճարման վերադարձ, երբ Քարտապանը վիճարկում է գործարքը, և Բանկը հետ է վերադարձնում գումարը,
Refund, reversal - Գումարի վերադարձ Քարտապանին՝ անավարտ կամ չեղարկված գործարքի դեպքում: Refund իրականացվում է կորած ապրանքը վերադարձնելուց հետո: Reversal-ի դեպքում գործարքն անմիջապես չեղարկվում է, և գումար չի գանձվում:
Հաշվանցված գործարք - Հաստատված գործարք, որն արդեն հաշվանցված է բանկային կամ վճարային համակարգում:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Ակցիան իրականացվում է Բանկի բոլոր «Mastercard» վճարային քարտերով,

2.2. Ակցիայի շրջանակում Քարտապանները, կատարելով անկանխիկ գործարքներ միջազգային առևտրային կետերում, ստանալու են քեշբեք 15 տոկոսի չափով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը գանձելուց հետո,

2.3. Յուրաքանչյուր Քարտի գծով տրամադրվում է առավելագույնը 5,000 ՀՀ դրամ գումարի չափով Քեշբեք,

2.4. Ակցիան գործում է 20.09.2026 թվականին Retrofest-ի ընթացքում:

3. Ակցիայի պայմաններ

3.1. Ակցիայի շրջանակում Քարտապանները Քեշբեք ստանալու համար պետք է վճարումներ կատարեն Retrofest-ի տարածքում գործող բարերում,

3.2. Վճարումը պետք է կատարվի Քարտով,

3.3. Ակցիային մասնակցում են ինչպես գործող, այնպես էլ նոր թողարկված Քարտերի Քարտապանները,

3.4. Քարտապանների կողմից Ակցիային մասնակցությունը կատարվում է ավտոմատ՝ առանց լրացուցիչ համաձայնության,

3.5. Քարտապանի հաշվարկված Cashback-ը Քարտապանին փոխանցվում է Ակցիայի ավարտից հետո հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում,

3.6. Քեշբեքը հաշվարկվում է Քարտապանի կողմից Ակցիայի ընթացքում նշված Վաճառքի կետում կատարված և հաշվանցված բոլոր գործարքների հանրագումարից,

3.7. Cashback տրամադրվում է այն Քարտերով կատարված գործարքների մասով, որոնք Cashback տրամադրելու պահին փակված չեն և ունեն գործող կարգավիճակ,

3.8. Refund, reversal, Chargeback կատարված գործարքների դեպքում Cashback չի տրամադրվում,

3.9. Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: